ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱՐԳԱՅԻՆ ՈՐՈՇՈՒՄԸ

«ՀՀ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ «ՊԵՏԱԿԱՆ ԿԵՆՍԱԹՈՇԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ 35-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 6-ՐԴ ՄԱՍԻ 1-ԻՆ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ԵՎ 9-ՐԴ ՄԱՍԻ 1-ԻՆ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ, 41-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 2-ՐԴ ՄԱՍԻ 3-ՐԴ ԿԵՏԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ԳՈՐԾԻ ԴԱՏԱՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԵՏԱՁԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով գործով զեկուցող՝ սահմանադրական դատարանի անդամ Ֆ. Թոխյանի առաջարկությունը,

նկատի ունենալով, որ գործով որպես պատասխանող կողմ դատաքննությանը ներգրավված ՀՀ Ազգային ժողովի պաշտոնական ներկայացուցիչների՝ ՀՀ սահմանադրական դատարան ներկայացրած բացատրություններում տեղ գտած առանձին փաստարկներ, մասնավորապես՝ առ այն, որ «Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս վեց ամսից ավելի ժամկետով բնակության մեկնող կամ վեց ամսից ավելի ժամկետով բնակվող Հայաստանի Հանրապետության քաղաքացին, դուրս գալով հաշվառումից, կորցնում է կենսաթոշակ ստանալու իրավունքը...», լրացուցիչ ուսումնասիրման կարիք ունեն և կարող են էական ազդեցություն ունենալ դիմողի կողմից բարձրացված սահմանադրաիրավական վեճի բովանդակության վրա,

ինչպես նաև ելնելով «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի վիճարկվող դրույթների կիրարկման առնչությամբ ձևավորված իրավակիրառական պրակտիկայի ու խնդրո առարկայի վերաբերյալ միջազգային փորձի համալիր ուսումնասիրման անհրաժեշտությունից,

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **ՈՐՈՇԵՑ.**

1. Գործի դատաքննությունը հետաձգել և այն սկսել 2012թ. սեպտեմբերի 25-ին, ժամը 11:00-ին:

2. «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68-րդ հոդվածի 6-րդ մասի հիմքով՝ գործի համակողմանի քննության և կողմերի դիրքորոշումների ամբողջական բացահայտման անհրաժեշտությունից ելնելով՝ գործի դատաքննությունը կազմակերպել բանավոր ընթացակարգով:

3. Այս կապակցությամբ վերանայել ՀՀ սահմանադրական դատարանի 06.03.2012թ. ՍԴԱՈ-10 աշխատակարգային որոշումը՝ ուժը կորցրած ճանաչել որոշման 2-րդ և 4-րդ կետերը։

4. «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի պահանջներին համապատասխան՝ սույն գործով ՀՀ սահմանադրական դատարանի նիստին հրավիրել ՀՀ կառավարության ներկայացուցչին՝ սահմանադրական դատարանի հարցերին պարզաբանումներ տալու անհրաժեշտությունից ելնելով։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՆԱԽԱԳԱՀ Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

11 մայիսի 2012 թվականի
ՍԴԱՈ-29